ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 06, 04.06.2024թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 03.06.2024թ. որոշում (որոշում **ՈՐԽ0102-32/L**) արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանների հաստատման մասին:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102 -32/L
Դաս: ՀՊ
«03» հունիսի 2024թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) Կանոնադրության 12.1 կետի ժը) ենթակետը, ինչպես նաև պարտատոմսերի թողարկման միջոցով Բանկի պարտավորությունների կազմի և կառուցվածքի բարելավման նպատակով՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հաստատել ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 2024 թվականի ապրիլի 10-ի ««ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության պարտատոմսերի ծրագրային ազդագիրը գրանցելու մասին» թիվ 1/123Ա որոշմամբ գրանցված ազդագրի ներքո արժեկտրոնային, առանց ապահովվածության պարտատոմսերի (այսուհետ՝ Պարտատոմսեր) թողարկման վերջնական պայմանները՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հանձնարարել Բանկի Գործադիր տնօրենին՝

1) Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ՝ ի գիտություն,
2) կազմակերպել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հետ «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման» պայմանագրի կնքումը,
3) թողարկվող Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ապահովել ցուցակման հայտի ներկայացումը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ՝ կարգավորվող շուկայում Պարտատոմսերի առևտրի կազմակերպման նպատակով,
4) երկրորդային շուկայում Պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով համապատասխան մասնագիտացված ընկերության հետ կնքել Պարտատոմսերի շուկայի ստեղծման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Գրիգոր Հովհաննիսյան**